Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 4th June 2023 Bulletin 25/2023

First Sunday after Pentecost (Beginning of Sundays of Resurrection)

ՅԱԿՈԲՈՍԻ ԿՈՂՄԷ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 5:16-20

Խոստովանեցէ՛ք իրարու ձեր յանցանքները, եւ աղօթեցէ՛ք իրարու համար, որպէսզի բժշկուիք: Արդարին ներգործող աղերսանքը շատ ազդեցիկ է: Եղիա կիրքերու ենթակայ մարդ մըն էր՝ մեզի նման: Ան աղօթեց որ անձրեւ չտեղայ, ու երկրի վրայ անձրեւ չտեղաց երեք տարի եւ վեց ամիս: Ապա դարձեալ աղօթեց, ու երկինք անձրեւ տուաւ եւ երկիր ծաղկեցուց իր պտուղը:

Եղբայրնե՛ր, եթէ ձեզմէ ոեւէ մէկը մոլորի ճշմարտութենէն, ու մէկը վերադարձնէ զայն, թող գիտնայ թէ ա՛ն՝ որ կը վերադարձնէ մեղաւորը իր մոլորութեան ճամբայէն, կը փրկէ անձ մը մահէն, ու կը ծածկէ մեղքերու բազմութիւն մը:

The Epistle of James 5:16-20;

Therefore confess your sins to each other and pray for each other so that you may be healed. The prayer of a righteous person is powerful and effective.

Elijah was a human being, even as we are. He prayed earnestly that it would not rain, and it did not rain on the land for three and a half years. Again he prayed, and the heavens gave rain, and the earth produced its crops.

My brothers and sisters, if one of you should wander from the truth and someone should bring that person back, remember this: Whoever turns a sinner from the error of their way will save them from death and cover over a multitude of sins.

Announcement:

Dear Parishioners,

We are being encouraged and asked constantly to pray for one another. Our Priest in Charge, Fr Nshan Alaverdyan is ready to oblige any request put to him, to pray in low, at the Altar, during Sunday Divine Liturgy. Your St Yeghiche Armenian Church Parish Council have prepared special forms which are placed at the entrance of the church. Please take a copy and fill accordingly and hand it to a member of the Parish Council at the door in order to include with all received requests.

In addition if you know of anyone who needs a visit at hospital or special prayers, our Priest is ready to oblige. Kindly inform a member of the Parish Council in order to organise.

Thank You

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 4:25-30

Ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. “Շատ այրիներ կային Իսրայէլի մէջ՝ Եղիայի օրերը, երբ երկինք գոցուեցաւ երեք տարի ու վեց ամիս, եւ մեծ սով եղաւ ամբողջ երկրին մէջ. բայց Եղիա անոնցմէ ո՛չ մէկուն ղրկուեցաւ, հապա միայն Սիդոնացիներուն Սարեփթա քաղաքը բնակող այրի կնոջ մը: Նաեւ շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ՝ Եղիսէ մարգարէին ատենը, եւ անոնցմէ ո՛չ մէկը մաքրուեցաւ, հապա միայն՝ Նէեման Ասորին”»:

Ժողովարանին մէջ բոլորն ալ զայրոյթով լեցուեցան՝ երբ լսեցին այս խօսքերը. ուստի կանգնելով՝ դուրս հանեցին զայն քաղաքէն, եւ տարին զայն մինչեւ այն լերան ցցուած ծայրը՝ որուն վրայ իրենց քաղաքը կառուցանուած էր, որպէսզի բարձր տեղէն վար նետեն զայն: Բայց ինք՝ անոնց մէջէն անցնելով՝ գնաց:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 4:25-30

I assure you that there were many widows in Israel in Elijah’s time, when the sky was shut for three and a half years and there was a severe famine throughout the land. Yet Elijah was not sent to any of them, but to a widow in Zarephath in the region of Sidon. And there were many in Israel with leprosy[g] in the time of Elisha the prophet, yet not one of them was cleansed—only Naaman the Syrian.”

All the people in the synagogue were furious when they heard this. They got up, drove him out of the town, and took him to the brow of the hill on which the town was built, in order to throw him off the cliff. But he walked right through the crowd and went on his way.

Եղիա մարգարեի հիշատակության օր

Հին Կտակարանի մեծ մարգարեներից է, որ հայտնի է Տիրոջ հանդեպ ունեցած հավատարմությամբ, հավատուրաց Աքաաբ թագավորի ու նրա կռապաշտ Հեզաբել թագուհու կողմից Իսրայելում սերմանված կռապաշտության դեմ նախանձախնդիր պայքարով: Եղիա մարգարեն ապրել և գործել է Քրիստոսից առաջ 9-րդ դարում: Նրա մասին պատմվում է Թագավորաց Գ և Դ գրքերում: Եղիա մարգարեի անունը հիշատակում են ավետարանիչները: Թագավորաց գրքում գրված է, թե ինչպես Եղիան, իբրև Աստծո խոսքի ճշմարիտ բանբեր, Տիրոջ տնօրինությամբ հայտնվում է հավատուրաց Աքաաբի առջև և հայտարարում սպասվող երաշտի մասին:

Կատարվում է Եղիայի մարգարեությունը և երեք տարի անց մարգարեն կրկին ներկայանում է Աքաաբին: Ապացուցելով կռապաշտների անզորությունը, Եղիան աղոթքով վառում է իր ողջակեզի կրակը, ապա դիմելով աստծուն, հորդառատ անձրեւ բերում: Եղիա մարգարեին են վերագրում զանազան հրաշարագործություններ, թե ինչպես աստվածային զորությամբ միշտ լի է պահում այրի կնոջ ալյուրի և յուղի ամանները, հարություն տալիս նրա մահացած որդուն եւ այլն: Հայ Առաքելական Եկեղեցու տոնելի սրբերի շարքում Եղիա մարգարեին առանձնահատուկ տեղ է հատկացված: Ի տարբերություն մյուս սրբերի, որոնց հիշատակությունը տոնում են շաբաթվա սովորական օրերին, Եղիա մարգարեի հիշատակությունը կատարվում է Հոգեգալստին հաջորդող միայն կիրակի օրը:

Commemoration of the Prophet Elijah

Prophet Elijah is one of the major prophets of the Old Testament, distinguished for his loyalty to the Lord, for his zealous struggle against idolatry spread in Israel by the apostate king Ahab and his idolatrous wife, Queen Jezebel.

Prophet Elijah lived in the IX century B.C. In the First Book of Kings (17-18) and the Second Book of Kings (1-2) is told about the activity of the Prophet Elijah. Evangelists also mention the name of the Prophet Elijah.

In the First Book of Kings, it is told that being the true herald of the Word of God Elijah, by the Lord's will appeared before the apostate king Ahab and warned about the upcoming drought. His prophecy came true and after three years the Prophet again went to the king Ahab. Proving the weakness of the idolatrous, Prophet Elijah prayed God asking to send down fire for the sacrifice and a heavy rain. It is also told that thanks to the divine grace the Prophet Elijah helped the widow in Zarephath making so that her bowl wouldn't run out of flour and her jar wouldn't run of oil, also restored the widow's dead sun to life.

DAILY BIBLE READINGS FOR 2023 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

5 June	**Sts. Hripsimiank**
	Proverbs 31:29-31; Isaiah 61:10-62:3; Romans 15:30-16:2; Matthew 10:26-33
6 June	**Sts. Kayaniank**
	Proverbs 1:20-23; Baruch 4:36-5:4; 2 Corinthians 6:16-7:1; John 16:1-5
7 June	**Romans 3:19-31; Matthew 9:9-15**
8 June	**St. John the Baptist and Athenogenes the Bishop**
	Proverbs 15:21-26; Isaiah 22:20-25; 1 Peter 5:1-7; Matthew 11:2-14
9 June	**Romans 4:1-12; Matthew 9:27-34**
10 June	**St. Gregory the Illuminator—Deliverance from the Pit**
	Wisdom 5:1-8; Isaiah 60:20-61:7; Hebrews 13:17-21; Matthew 19:27-29

ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ԿՈՒՅՍԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ 5/6/2023

Ազնվազարմ Հռիփսիմեն 37 քրիստոնյա կույսերից մեկն էր, ով Գայանե մայրապետի հետ ապրել է Դիոկղետիանոս կայսեր օրոք (284-305 թթ) Հռոմի լեռներում գտնվող Ս. Պողոս վանքում: Հրաշագեղ կույսն իր շլացուցիչ գեղեցկությամբ գերում է կայսրին, ով անհապաղ կամենում է կնության առնել նրան: Բարեպաշտ կույսերը, չկամենալով ենթարկվել կայսեր ցանկությանը, իրենց մայրապետի առաջնորդությամբ փախչում են Ալեքսանդրիա: Ավանդույթի համաձայն՝ տեսիլքով նրանց երևում է Ս. Աստվածածինը և պատվիրում մեկնել Արարատյան երկիր՝ Հայաստան: Կույսերը գալիս են Վաղարշապատ:

Ճանապարհին, Վարագա լեռան մոտով անցնելիս, Հռիփսիմեն Ս. Խաչափայտից մի մասունք, որը ժառանգաբար էր ստացել և միշտ կրում էր իր պարանոցին, ամփոփում է հայոց հողում: Այդ մասունքը հրաշքով գտնվում է 7-րդ դարում, որից հետո Հայ Առաքելական եկեղեցին խաչի տոների շարքում սկսում է տոնել նաև Վարագա խաչի տոնը: Հայոց Տրդատ արքան, իմանալով կույսերի հետ կապված պատմությունը, ինքն է ցանկանում տիրանալ գեղեցիկ կույսին: Հռիփսիմեին բերում են պալատ, նրա հետ նաև՝ Գայանեին, որպեսզի Հռիփսիմեին հորդորի չհակառակվել կայսերը: Սակայն Տրդատն այդպես էլ չի կարողանում տիրանալ գեղեցկատես Հռիփսիմեին և զայրացած հրամայում է սպանել բոլոր կույսերին: Նահատակ կույսերի նշխարներն ինն օր անց գտնում, հողին է հանձնում Ս. Գրիգոր Լուսավորիչը, այնուհետև՝ վկայարաններ կառուցում: Հետագայում, հենց այդ վայրերում կառուցվում են Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե և Ս. Շողակաթ եկեղեցիները: Կույսերի նահատակությունը շրջադարձային նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ:

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Նրանց նահատակությունից հետո 13-ամյա բանտարկությունից ազատ էր արձակվել Ս. Գրիգոր Լուսավորիչը, ով կոչված էր Քրիստոսի լույսը տարածել հայոց աշխարհում:

Հայ Առաքելական եկեղեցում կույսերի հիշատակին նվիրված Ս. Հռիփսիմյան և Ս. Գայանյան կույսերի տոները նշվում են Հոգեգալստյան տոնից մեկ շաբաթ անց՝ երկուշաբթի և երեքշաբթի օրերին: Կույսերի հիշատակի օրերին նրանց անունը կրող եկեղեցիներում մատուցվում է Ս. Պատարագ:

COMMEMORATION OF ST. HRIPSIME AND HER COMPANIONS

Noble Hripsime was one of the 37 Christian nuns who together with the Abyss Gayane lived during the period of the reign of the Roman King Diocletianus (284-305 years) in the Monastery of St. Paul located in the mountains of Rome.

Pretty Hripsime captivated the King by her dazzling beauty, who wished to get married to her. Disobeying the king, the pious nuns, led by their Abyss Gayane, ran away from Alexandria. According to the tradition, Holy Godmother appeared to them and told them to leave for the Araratian country - Armenia. So, the nuns went to Vagharshapat. On their way, passing by the Mountain of Varague, Hripsime buried in the earth a relic from the wooden Holy Cross, which she always had on her neck. The relic was found by a miracle in the 7th century and since then the Feast of the Holy Cross of Varague started to be celebrated in the Calendar of the Armenian Apostolic Church along with the other feasts dedicated to the Holy Cross.

The Armenian King Tiridates, becoming aware of the nun's story, himself wished to get married to Hripsime. Hripsime was brought to the palace, and Gayane was also brought to the palace to convince Hripsime to obey the King. But even in that way the King did not manage to get married to Hripsime and becoming angry, ordered to kill all the nuns. Nine days later St. Gregory the Illuminator found the relics of the nuns and burying the relics, built martyriums in those sites, where in the future the Monasteries of St. Hripsime, St. Gayane and St. Shoghakat were erected.
Nuns' mardyrdom is a turning point in the history of the Armenian nation. After their martyrdom St. Gregory the Illuminator was brought out of the pit after more than 13 years' imprisonment to spread the light of Christ in Armenia.

In the Armenian Apostolic Church on the days of the feasts dedicated to the memory of St. Hripsime and her companions a Divine Liturgy is celebrated in all Armenian Churches. On the eve of the feast ceremonies are held, which start after the evening service, and Church hymns and songs, dedicated to the nuns, are sang.

Ս. ԳԱՅԱՆՅԱՆՑ ԿՈՒՅՍԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ 6/6/2023

Դիոկղետիանոս կայսեր օրոք Ս. Գայանեն 37 քրիստոնյա կույսերից մեկն էր, Հռոմի Ս. Պողոս վանքի մայրապետը: Դիոկղետիանոսը հեթանոս էր և հալածում էր քրիստոնյաներին: Կայսրը ցանկանում է կնության առնել կույսերից մեկին՝ Հռիփսիմեին, ով չի համաձայնվում, և նրանք փախչում են Ալեքսանդրիա, այնուհետև՝ Հայաստան: Հայոց Տրդատ արքան, իմանալով կույսերի հետ կապված պատմությունը, ինքն է ցանկանում տիրանալ գեղեցիկ կույսին: Հռիփսիմեին բերում են պալատ, նրա հետ նաև՝ Գայանեին, որպեսզի Հռիփսիմեին հորդորի չհակառակվել կայսերը: Սակայն Տրդատն այդպես էլ չի կարողանում տիրանալ գեղեցկատես Հռիփսիմեին և զայրացած հրամայում է սպանել բոլոր կույսերին: Գայանեին չարչարել են, գլխատել: Նրա մարմինը Ս. Գրիգոր Լուսավորիչն ամփոփել է տապանի մեջ և կնքել արքունի, քահանայական-հայրապետական կնիքներով: Հետագայում, հենց այդ վկայարանների տեղում կառուցվում են Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե և Ս. Շողակաթ եկեղեցիները:

Հայ Առաքելական Եկեղեցում կույսերի հիշատակին նվիրված Ս. Հռիփսիմյանց և Ս. Գայանյանց կույսերի տոները նշվում են Հոգեգալստյան տոնից մեկ շաբաթ անց՝ երկուշաբթի և երեքշաբթի օրերին: Կույսերի հիշատակի օրերին նրանց անունը կրող եկեղեցիներում մատուցվում է Ս. Պատարագ:

COMMEMORATION OF ST. GAYANE AND HER COMPANIONS

In the Armenian Apostolic Church on the days of the feasts dedicated to the memory of St. Gayane and her companions a Divine Liturgy is celebrated in all Armenian Churches. On the eve of the feast ceremonies are held, which start after the evening service, and Church hymns and songs, dedicated to the nuns, are sang.

St. Gayane lived during the period of the reign of the Roman Emperor Diocletianus (284-305 years) who subjected Christians to persecutions. She was one of the 37 nuns who left Rome for Armenia.

During the first 20 years of his reign Diocletianus didn't persecute Christians despite his being heathen. However, since 303, under the pressure of Caesar Galerius, he subjected Christians to severe persecutions. He issued 4 edicts against Christians which envisaged Christians' removal from the army, confiscation of church property, first of all buildings and ritual books, church servants' arrest and capital punishments, subjecting Christians to torments pursuing the goal to make them to give up their beliefs and faith. Persecutions agitated the whole empire, Christians were martyred for the sake of Christ. It was during this difficult period that Gayane and her companions left Rome.

Diocletianus informed about it the Armenian King Tiridates suggesting him either to return one of the nuns – Hripsime, or to get married to her. Becoming aware of the nun's story, himself wished to get married to Hripsime. King's servants searched and found Hripsime and started to convince her to obey the king's will who was captivated by her dazzling beauty and wished to get married to her. Hripsime rejected him saying that she as well as the other nuns had already become the bride of Christ and couldn't marry.

Becoming angry, the king ordered to subject her and the other nuns to severe torments. Her tongue and womb were cut, eyes were put out and her body was dismembered. Abyss Gayane and two of the nuns also were subjected to severe torments for encouraging Hripsime to endure tortures for the sake of Christ. Executioners pierced their feet, hang them, tore off their skin, cut their abdomens and afterwards beheaded them. The remaining 33 nuns were put to sword and parts of their bodies were thrown to the beasts for eating.

Nine days later St. Gregory the Illuminator found the relics of the nuns and burying the relics, built martyriums in those sites, where in the future the Monasteries of St. Hripsime, St. Gayane and St. Shoghakat were erected.

Join St. Yeghiche Armenian Church Choir

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at St. Yeghiche Armenian Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member by learning the Armenian hymns and rituals. No prior experience or knowledge is needed. The choirmaster, Aris Nadirian, will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

We look forward to welcoming everyone to our choir. Your presence will expand and enrich our choir. For further details, please contact: services@styeghiche.org.uk.

"Sing for joy in the LORD, O you righteous ones; Praise is becoming to the upright. Give thanks to the LORD with the lyre; Sing praises to Him with a harp of ten strings. Sing to Him a new song; Play skilfully with a shout of joy."

Psalm 33:1-3

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Ձեր մեղքերը միմեանց խոստովանեցէ՛ք եւ միմեանց համար աղո՛թք արէք, որպէսզի բժշկուէք. քանզի արդարի աղօթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է» (Յակ. 5.16):

Քրիստոսասէ՛ր եղբայրներ եւ քոյրեր,

Հոգեգալստեան տօնին յաջորդող այս կիրակին յայտնի է իբրեւ Եղիա մարգարէի յիշատակման օր: Յետաքրքիր մի առանձնայատկութիւն կայ. առաքելական շրջանից սկսած՝ բոլոր կիրակիները նուիրուած են Քրիստոսին եւ սրբերի տօներ այդ օրը չեն յիշատակւում: Այս օրը բացառութիւն է: Շատերը պիտի հարցնեն՝ ինչո՞ւ, ո՞վ է Եղիա մարգարէն, որ այսպիսի բացառիկութեամբ է յիշւում:

Եղիայի անունը մշտապէս կապուել է Մեսիայի՝ Քրիստոսի գալուստի հետ: Նշանաւոր այս մարգարէն Աստծոյ նկատմամբ նախանձախնդրութեան եւ հաւատարմութեան օրինակ եւ խորհրդանիշ է իր կերպարի բացառիկութեամբ: Ն.Ք. 9-րդ դարում Իսրայէլի Աքաաբ թագաւորը իր օտարածին եւ կռապաշտ կնոջ ազդեցութեամբ ինքն էլ սկսել էր պաշտել կուռքերին՝ իր ժողովրդին մոռացնել տալով Աստծոյ պաշտամունքը եւ աջակցելով հեթանոսութիւն քարոզող Բահաղի քուրմերին: Իսկ թագուհին ամենուրէք փնտրում եւ սպանել էր տալիս Տիրոջ մարգարէներին: Այս ժամանակ է, որ Եղիան Աստծուց ուղարկուեց՝ առանց երկիւղի յանդիմանելու ուրացող թագաւորին, եւ իր աղօթքով երէք տարի երաշտ եղաւ՝ իբրեւ պատիժ կռապաշտութեան: Իր նախանձախնդրութեամբ թագաւորի, գրեթէ հազարի չափ կռապաշտ մարգարէների եւ ժողովրդի առաջ միայնակ վկայեց Աստծոյ ճշմարիտ լինելը՝ երկնքից աղօթքով կրակ իջեցնելով, ինչը չկարողացան անել կռապաշտները: Իր բոցաշունչ խօսքով ու կերպարով ժողովրդի դարձի եւ հեթանոսական կռապաշտութեան վերացման պատճառ դարձաւ: Յակոբոս առաքեալը, իր ընդհանրական նամակում խօսելով աղօթքի ուժի մասին, Եղիային է յիշում, ասելով. *«արդարի աղօթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է: Եղիան մարդ էր մեզ նման՝ կրքերի ենթակայ. նա աղօթեց, ու երկրի վրայ երեք տարի ու վեց ամիս անձրեւ չտեղաց: Ապա դարձեալ աղօթեց, եւ երկինքը անձրեւ տուեց, ու երկիրը բուսցրեց իր պտուղը» (Յակ. 5.17-18):* Եղիա մարգարէն է, որ քառասուն օր անապատում քայլելով՝ Աստծոյ յայտնութեանն արժանի եղաւ եւ առաքելութեան աւարտին Տիրոջից երկինք տարուեց՝ առանց մահ ճաշակելու: Թաբոր լերան վրայ Քրիստոսի պայծառակերպութեան ժամանակ առաքեալներին տեսանելի եղան հանդերձեալ աշխարհից Մովսէսը եւ դրախտաբնակցներից Եղիան՝ Փրկչի հետ խօսելով խաչելութեան եւ յարութեան մասին:

Կիրակի օրն են նշւում Քրիստոսին վերաբերող բոլոր յիշատակումները եւս՝ Եկեղեցու, Խաչի տօները, Փրկչի այցելելն ու Աստուածածին Ս.Կոյսի հոգին երկինք վերափոխելը: Կիրակի օրը Եղիայի յիշատակը տօնելը Փրկչի վերադարձի յիշեցման խորհուրդն ունի, քանի որ Եղիա մարգարէն է, որ Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ դարձեալ պիտի գայ Ենովքի հետ՝ քարոզելու եւ պատրաստելու Տէր Յիսուսի գալուստը: Եղիան բոլոր դարերի հաւատացեալների համար եղել եւ մնում է նախանձախնդրութեան օրինակ, առանց վախի ու երկիւղի Տիրոջ հաւատարմութեան վկայութիւն տուող ներշնչուն կերպար:

Մեզ համար թերեւս կարեւորագոյն ուղերձն այն իրաւիճակի կրկնութիւնն է, որի ժամանակակիցնեն ու վկաներն ենք մենք: Այժմ եւս հաւատքային մեծ ժառանգութեան իշխողները յաճախ նոր կուռքերի առաջ են խոնարհւում եւ թոյլ տալիս այդ կուռքերի "մարգարէներին" քարոզելու, տարածելու Աստծոյ հաւատի հակառակը, կռապաշտականը, դիւականը, հակաաստուածեանը:

Այդ մերժումի եւ ուրացումին իբրեւ պատասխան՝ այժմ էլ կարծես հոգու երաշտ ու սով է, ուր թէ՛ կուռքերը, թէ՛ հալածանքներն այլեւս ներսի, հոգու, չերեւացող աշխարհի մէջ են՝ առաւել դաժան եւ դժուար որսալի, առաւել քանդիչ եւ դժուար բուժելի, քանզի անտեսանելի վերք ունեցողը յաճախ չի խոստովանում իր վիրավոր, հիւանդ վիճակն ու բուժման անհրաժեշտութիւնը:

Հայոց բանաստեղծներից Աւետիք Իսահակեանն գրեթէ հարիւրամեայ հեռուից զգուշացրել է ոգեզրկութեան ճգնաժամի արդիւնքի մասին.

Ես ձեզ ասում եմ՝ կը գայ Ոգու սով, Եվ դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ, Կընկնեք մուրալու հափրած որկորով՝ Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ:

…Դուք, որ հեգնեցիք ուժն ստեղծագործ՝ Ձեր նիւթի հանդէպ կը գայ ոգու սով. Եւ մուրացկի պէս փշրանքի համար Ծարաւ ու նօթի կ'անցնէք ծովից ծով:

Ուղիղ մէկ շաբաթ առաջ՝ Հոգեգալստեան օրը, մենք տօնեցինք Սուրբ Հոգու իջնելը առաքեալների վրայ: Այդ գալուստը կրակէ լեզուների տեսքով եղաւ՝ նորովի փարատելով ամէն տեսակ կասկած եւ վկայելով, որ Սուրբ Երրորդութիւնն է միակ ճշմարիտ Աստուածը: Այդ վկայական քարոզչութեան համար Սուրբ Հոգով զօրացան առաքեալները: Եղիան իսրայէլացիներին կրակէ վկայութիւն տուեց եւ աղօթքին իբրեւ պատասխան երկնքից իջնող եւ զոհաբերութիւնը լափող կրակը տեսնելով՝ բերանքսիվայր ընկան եւ աղաղակեցին. «Արդարեւ, Տէրն Աստուած է, Տէրն Աստուած» (Գ. Թագ. 18.39): Դրանից յետոյ կռապաշտութիւն քարոզող բոլոր քուրմերին իսրայէլացիները վերացրին իրենց միջից, քանզի մէկ Աստուած կայ երկնքում եւ երկրի վրայ: Քրիստոս իսկ ասաց. *«Չէք կարող ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային»(Ղուկ. 16.13)*՝ կրկին շեշտելով Աստծոյ միակութիւնը:

Համաշխարհային եւ համահայկական հոգեւոր ճգնաժամը մեզ ստիպում է այսօր առաւել քան երբեւէ համախմբուելու Աստծոյ հրեղէն Խօսքի՝ Յիսուս Քրիստոսի շուրջ եւ դառնալու մեր սրբազործ նախահայրերի կեանքի եւ գործի շարունակողը Աստծոյ ստեղծագործ Հոգու առաջնորդութեամբ:

Աղօթենք միմեանց համար, հոգ տանենք միմեանց նկատմամբ, Քրիստոսի սիրով առաւել սիրենք իրար եւ յիշենք, որ ամէն պատարագին սիրոյ ողջունով Քրիստոս ենք տեսնում եւ գրկում-համբուրում՝ ի դէմս եկեղեցու մեր եղբայրների եւ քոյրերի:

«Ողջունեցէ՛ք միմեանց սուրբ համբոյրով: Խաղաղութիւն ձեզ բոլորիդ, որ Քրիստոս Յիսուսի մէջ էք: Ամէն» (Ա Պետր. 5:14):

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ

Աստվածածի՛ն, Քրիստոսի մայր և Հոր Միածնի ծնող, անեծքները վերացնող և մարդկային ցեղի պարծանք, Հորը հաշտեցնող արարածներիս հետ, կույսերի թագ ու պսակ և համարձակ բարեխոս մեղավորների համար:

Ամեն ինչով մեղավորս ընկնում եմ քո առջև և աղաչում իբրև նույն ինքը՝ քեզնից մարմնացածը, բարեխոսիր ինձ համար Բան Աստծու առջև, որին ծնեցիր մարմնով, որին կերակրեցիր՝ բոլորի և բոլոր կենդանյաց կերակրիչին:

Ինձ համար աղաչիր քո անդրանիկին, կանգնի՛ր նրա առջև՝ սուրբ ստինքներդ ցույց տալով, նրա առջև միջնորդ ու բարեխոս դարձրու իր մանկությունը, կաթով սնվելը որպես մանուկ, ուսիդ առնելը, գրկով գգվելը, շրթներով համբուրելը, ողջագուրելն իբրև մանկան, քո գնալ-գալը նրա հետ Եգիպտոս և Նազարեթ և ամենուր, նրա համար տրտմությամբ տառապելը չարչարանքի ժամին, քեզ Հովհաննեսին հանձնարարելը, երբ խաչի վրա վշտով գամված էր, և քո դառն արտասուքը, որ վտակի պես հեղում էիր, երբ տեսար նրան խաչի վրա վտանգված:

Քանի որ մատնվեց դատաստանի՝ տառապում էիր կսկիծով չարաչար տանջանքների համար, սաստիկ ծարավելուն, լեղի ու քացախ ճաշակելուն, քրքմնագույն արյան իջնելը տեսնելով, խաչից արնաներկ մարմինն իջեցնելիս, դիազարդած սուրբ գերեզման դնելիս:

Աղաչում եմ քեզ, Լույսի մայր, ինձ համար մեղքի թողություն խնդրիր, նրա առջև դիր աղերս ու աղաչանք՝ (հիշեցնելով) նրա կրած չարչարանքները, որ ինձ համար կրեց բարերարն ու մարդասերը: Սուրբ կույս, հիշեցրո՛ւ այսքան չարչարանքս, որ թերևս ողորմի և ներե բազմամեղիս, և ջնջե իմ հանցանքի գիրը, և իր անմեղ մատով ու սուրբ արյունով դրոշմե դեզերածիս անվախճան կյանքի մատյանում, իր բոլոր սրբերի մոտ, որ նրանց հետ փառավորեմ ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՌՆԵՑԻ

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

No Memorial Service Request for this week

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

Hokehankist and in Liu of Flowers:
Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.
Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal

Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.